

## ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ, ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐ

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՊԱՏՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(ՊԲ ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)\*

- Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիրուրյունների թեկնածու,  
դոցենտ, «Կաճառ» գիրական կենդրուհի ղեկավար,  
Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Կաճառ» գիրական կենդրուհի  
ավագ գիրաշխափող & Ա. ԱՎԱՆԵՍՈՎ, ՄՄՀ Կովկասագիրուրյան  
կենդրուհի աշխատակից

Պաշտպանության բանակի՝ որպես կանոնավոր գինված ուժերի կազմավորման հարցի ուսումնասիրուրյունը հրատապ է Ադրբեջանի ազրենիայի հետևանքով հարկադրված զինված ինքնապաշտպանության դիմելու՝ Արցախի հայ ազգաբնակչության՝ միջազգային իրավունքով ամրագրված գործոդրությունների արդարացնության փասոր հանրահոչակելու տեսակետից:

Թեմային վերստին անդրադառնալը պահանջված է նաև այն հանգամանքով, որ որոշ հեղինակներ, անտեսելով գիտության արդի նվաճումները, այդ թվում նաև ՊԲ կազմավորման հիմնահարցերի գիտական ուսումնասիրությունների արդյունքները, շարունակում են նախկին սխալները կրկնել և անհարկի շրջանառել, որոնք ակնհայտորեն խոշընդոտում են ճշմարտության որոնումների առաջնարար ու վնասում տեղեկատվական պատերազմում հայկական դիրքերի ամրապնդմանը, Ադրբեջանի հետ հակամարտության վերաբերյալ օրյեկտիվ հասարակական կարծիքի ձևավորմանը: Բանակաշխնության վերաբերյալ հրատարակված մի հոդվածի բացում սխալներից մեկին՝ Պաշտպանության բանակի կազմավորման վերաբերյալ դրա հեղինակի բյուր պատկերացմանն անդրադարձ արդեն եղել է<sup>1</sup>: Մասնավորապես, հատկանշվել է, որ անտեսելով նախորդ գիտական հետազոտությունները կամ հերթական անգամ անտեղյակություն դրսնորելով՝ պատմաբան Հրանտ Արքահամյանը գրել է. «Արցախի բանակի ամբողջական կազմավորման գործընթացը ավարտին հասավ այդ նույն թվականի (1992) սեպտեմբերին»<sup>2</sup>: Այս մասին թերևս չխոսվեր, եթե Արցախյան

\* Հեղազուրությունն իրականացրել է ԼՂՀ ԿԳՆ կողմից պրանադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N SCS 16.10-007 գիրական թեմայի շրջանակներում:

<sup>1</sup> Հարությունյան Ա., Նորագոյն շրջանի ազարագրական պայքարի պատմության ինկարչությունների և հարակից այլ հարցերի մասին, «Կաճառ» պարեգիրը, հ. 3(35-46), Ը., «Կաճառ» գիրական կենդրուհի հրապ., 2014, էջ 215-216:

<sup>2</sup> Արքահամյան Հ., Կանավորական ջոկատներից մինչև Պաշտպանության բանակի արենդումը, «Լրաբեր հասարակական գիրուրյունների», Ե., 2006, հ. 3, էջ 129: Այդ միավոր հենդիմակը կրկնել է նաև ավելի ուշ տպագրած գրքում գրեն Արքահամյան Հ., Մարդկանց Արցախը, գիրք Գ(1985-2000), Ս., «Դիզայն», 2007, էջ 560:

պատերազմին, Պաշտպանության բանակի մարտական ուղուն և կազմավորմանը նվիրված ատենախոսության հրապարակային պաշտպանությանը ներկա չիներ այդ ուղյան պատմաբանը և անձամբ լսած չիներ, թե ինչպիսի է Մ. Հարությունյանը պարբերաշրջանների բաժանել ՊԲ կազմավորման գործընթացը: Որևէ արդարացում չունի Հ. Աբրահամյանի կողմից ՊԲ կազմավորմանը և մարտական ուղուն նվիրված նախորդ ուսումնասիրությունների արդյունքների հանիրավի անտեսումը, ինչը հանգեցրել է բյուրիմացության: Մինչեւ այդ ուսումնասիրություններում փաստորեն ապացուցել է, որ ՊԲ կազմավորման գործընթացը տևել է 1988 թ. փետրվարից մինչև 1994 թ. հունվարը և ունեցել է 4 փուլ<sup>3</sup>:

Հանդիպում են նաև այնպիսի հեղինակներ, որոնք, անտեսելով Արքքեցանի Հանրապետության հետ Արցախի Հանրապետության հականարտության լուծված չինելը, տեղեկության պատերազմում համոզի ու աներկա փաստարկների կարևորությունը, Արցախում պետականաշխության ակներև նվաճումները, փորձում են պետականության բաղադրիչներից մեկը՝ Պաշտպանության բանակը ներկայացնել որպես ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումներից մեկը՝ այդպիսով ակամա ժխտելով ՊԲ՝ որպես Արցախում պետականակերտման՝ հանուրի կողմից ճանաչված ամենամեծ նվաճման փաստը: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում բանակաշխության գործընթացն առանձին ուսումնասիրության նյութ դարձած ՀՀ ՊՆ մասունի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը, անդրադառնալով Մ. Հարությունյանի աշխատությանը<sup>4</sup>, գրել է. «Այն հանգամանորեն ներկայացնում է ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթա-

<sup>3</sup> Տե՛ս Հարությունյան Մ., Արցախան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. գիրուր թեկնածուի գիրակ. աստղիճանի հայցման արենախոսություն, Ե., 2001(պահպան է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիրական և Հայաստանի ազգային գրադարաններում), Էջ 158-159, Առյալ՝ Պաշտպանության բանակ: Տե՛ս Դարարայան ազգագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան, 1 հարուրով, Ե., ՀՀ 2004, էջ 549-554, Առյալ՝ ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման պատմությունից, «Ազգ և ժառագություն» համահայկական երիտրասարդական գիրաժողով: Զեկուցումների ժողովածու, Ս., 2006, էջ 93-96, Առյալ՝ Ծուշի ազգագրամաս և ԼՂՀ զինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, Ծուշի հայոց բաղաքակրրության օրան (Ծուշի ազգագրաման 15-րդ դարեղարձին նվիրված գիրաժողովի նյութեր), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիրություն» հրայտ., 2007, էջ 205-217 և այլն:

<sup>4</sup> Հարությունյան Մ., Արցախան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. գիրուր. թեկնածուի գիրակ. աստղիճանի հայցման արենախոսություն:

ցր. նաև Արցախում ընթացած մարտական գործողությունները: Նման մեկնաբանմաք, սակայն, կարծես առանձնացվում է Հայոց բանակի կազմավորման միասնականությունը\*, քանի որ, բայ եռթյան, Պաշտպանության

\* Ավելիոր չենք համարում այս պրամաքանությամբ շինծու և անհիմ մեղադրանք ներկայացնող հեղինակներին պարզաբնակությունը, որ պատմաբան Մ. Հարույտնեանի խնդիրը է եղել ներկայացնելու Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին ինչն ամենին չի նշանակում, թե «Հայոց բանակից առանձնացնելու» միրում է դրսուրվել: Անկանած, ամբողջ Հայկական բանակի պատմության ընթացքաման հավակնորդը պարտավոր է անպայման ներկայացնել Պաշտպանության բանակի՝ որպես հայկական պետականության առաջնադիրի պահապանի պարմությունը ևս, բայց ահա ՊԲ պատմությունը ուսումնափրության կյուր դարձրած հեղինակի համար ամենինին պարտադիր չէ մանրամասնել Հայոց բանակի ամբողջական պարմությունը: Բայց ցանկության դեպքում անեն որ կարող է դիմունը, որ խնդրու առարկա աշխարհությունը ՊԲ կազմադրության գործընթաց ու մարդարկան ուղին բար անհրաժեշտության ներկայացնել է հայկական բանակի ամբողջական պարմության համարեկարություն: 1991-1994 թթ. Արցախյում բանակաշինության գործընթացը հնարավորին ներկայացնել է թե՛ փաստացի և թե՛ իրավաբանորդնել: Եթե որոշ ընթերցողներ այդ ամբողջության մեջ չեն դիմունը ակնհայրը, ապա «մեղավոր» են փաստերը, բայց ոչ երեք դրանց հավաքարին մնացող ուսումնափրողը: Իսկ նրանք, ովքեր փաստերի անդիմանք փորձում են քաղաքականացնել անցյալը կամ ժողովրդահան հայրարարություններով («մածունը սպիտակ է» հանգույա) սրբությունը ոչ գիտական մողեցումը, ապա նախ սպիտակած են պատրասխանելու հերկյալ հարցերին՝ ի՞նչ նկատի ունեն «Հայոց բանակ» ասելով, ի՞նչ իրավաքաղաքական փաստերի հիման վրա: Կարծում ենք՝ սկզբունքային պետք է համարել այն մուլեցումը, որ Արցախի պաշտպանության բանակը՝ որպես երկրորդ հայկական պետության կարևոր խորհրդանշ՝ գիտական շրջանառության մեջ դնելը անհրաժեշտ փաստարկ կդառնա: «Լեռնային Հարաբազն իրը ՀՀ կողմից օկուպացվելու, Արցախի պաշտպանության բանակը ՀՀ ԶՈՒ մի սրուրաբաժանումը կամ «Հայկական էքսպելիցիոն կորպուս» ներկայացնելու հենվարար հանուն ինքնորշման իրավունքի իրացման համաժողովրդական պայքարը Սդրբեանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հակամարդության նենազափինելու»՝ մեր հակամարդությունը տամարելու տեղորազնելու համար:

Այդ համագիեւսպան կարևոր է նաև Արցախի Հանրապետության՝ որպես ամելի պետության ինքնուրշման իրավունքի հիման վրա միջազգային ճանաչմանը հասնելը, իսկ զայտունաբային-հուշական սրացումներով Արցախը ՀՀ մի մարդու հուշակող քաղաքական գործիչների ու հեղինակների փաղաժամ պողորկումների ընդունմանը «արօի ծառայություն» են հայկական դիվանագիրության ու քաղաքագիրական մորթի համար:

բանակը Հայկական բանակի կարևորագույն, բայց միայն մի մասն է»<sup>5</sup>:

«Հայկական բանակ» հասկացորդյան՝ որպես ՀՀ ՉՈՒ ու ԼՂՀ ՊԲ ընդհանրական մեկ անվանման օգտագործումը մեջբերված պարբերությունում և հաջորդիվ զիտական համարվել չի կարող, որովհետև ԼՂՀ պաշտպանության բանակի՝ իրքն առանձին պետական կառույցի կարգավիճակը ճանաչված ու արձանագրված է ինչպես ԼՂՀ և ՀՀ իրավաքաղաքական ու դեկապար փաստարդերում, այնպես էլ միջազգային հեղինակավոր կառույցների ու փորձագետների վերլուծություններում<sup>6</sup>:

Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակը կազմավորվել, կայացել ու զարգանում է ՀՀ ԶՈՒ հետ ամենաբարձր մակարդակի հատեղը և հետևողական խորացման ու սերտածնան ուղիղությունը: Կարծում ենք, որ ՀՀ ԶՈՒ կազմի մեջ մտնելու հեռանկարը պայմանավորված է ՀՀ ու Արցախի Հանրապետության համադաշնության կամ հնարավոր դե յուրե վերամիավորման տեսլականի կենսագործունությունը:

Արդեն զիտական շրջանառության մեջ են և պատմագրության սեփականությունն են դարձել բազմաթիվ հիմնահարցեր: Դրանցից կարելի է հատկանշել կամավորական և աշխարհագործային ռոկատների կազմա-

<sup>5</sup> Հովհաննիսյան Ա., Բանակաշնորհութեալ Հայաստանի երրորդ հանրապետութեան, Ե., 2015, էջ 12:

6 *Шиң, орханың, «Легенда және Қараша аудио-видео көзүнде 1995 жылдың майындағы қызығушылықтың таралып калғанынан кейінгі деңгелдердегі өзгертіліктердің мәндерін»* Л.Д. орханың, *Легенда және Қараша аудио-видео көзүнде 1995 жылдың майындағы қызығушылықтың таралып калғанынан кейінгі деңгелдердегі өзгертіліктердің мәндерін* (1994-2001), У., «*Пән-жарылыш*» 7-шілдесінде, 2001, № 121-122, «*Дәлелділік жағдайлардағы қызығушылықтың таралып калғанынан кейінгі деңгелдердегі өзгертіліктердің мәндерін*» Л.Д. орханың, «*Пән-жарылыш*» 2005, № 12, № 25-28, *Арғынбай Қараша аудио-видео көзүнде 1995 жылдың майындағы қызығушылықтың таралып калғанынан кейінгі деңгелдердегі өзгертіліктердің мәндерін* (УК 7-шілдесінде, 2005, № 12, № 25-28, «*Дәлелділік жағдайлардағы қызығушылықтың таралып калғанынан кейінгі деңгелдердегі өзгертіліктердің мәндерін*») деңгелдердегі өзгертіліктердің мәндерін сипаттауда.

վորման շարժադրները, Ինքնապաշտպանության ուժերին (ԻՊՈՒ) պետական կարգավիճակ շնորհելու մասին ԼՂՀ ԳԽ 1992 թ. փետրվարի 24-ի որոշման ու ԼՂՀ պաշտպանության խորհրդի գործունեության նշանակությունը, 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության (այնուհետև՝ Ինքնապաշտպանության) կոմիտեի (ԻՊԿ) ստեղծման և նրա գործունեության հիմնական ուղղությունները, «Պաշտպանական շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կառուցվածքի մասին» ԻՊԿ նախագահի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանի և կանոնավոր բանակի ստեղծման նախնական փուլի առանձնահատկությունները: Անդրադարձներ են եղել նաև բանակային շինարարության քաղաքական հիմքերին, 1992 թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) ստեղծմանը և գործունեության հիմնական ուղղություններին, ապա նաև բանակային ենթակառույցների կատարելազործման, մարտական փորձի հարստացման և նյութատեխնիկական հիմքերի ստեղծման գործընթացներին (1992 թ. սեպտեմբեր-1993 թ. հունվար)<sup>7</sup>:

Կարևորվել են նաև ԻՊԿ շտարում մարտերի պլանավորման, հրամանատարներին օգնելու, բանակային կադրերն ակտիվացնելու աշխատանքների արյունավետության բարձրացման հետևողական ջանքերը, ինչպես նաև զորքերի կառավարման կատարելազործումը, նորաստեղծ ուսումնական կենտրոններում հրամանատարների մարտավարական հմտությունների բազմապատկումը: Առաջին պլան է մղվել ԻՊՈՒ-ն ՊԲ-ի վերակազմավորելու մասին ԼՂՀ ՊՊԿ նախագահի 1993 թ. նոյեմբերի

<sup>7</sup> Տե՛ս Հարուրյունյան Մ., Արցախյան պարերազմի սկիզբը և Ծովիի ազագորումը, Ե., ՀՀ ԳԱՍՏ «Գիլտուրյուն» հրատ., 2000, Առյախ, Արցախյան պարերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., պարմական գիլտուրյունների թեկնածովի գիրական ասպիհանի հայցման արենախոտություն, Առյախ՝ Արցախի հերձնապաշտպանության ուժերի կազմավորումը, «ԱրԴՀ գիրական լրեղեկազիր», 2000, հ. 1, էջ 78-87, Առյախ, Բանակի և հասարակության միասնությունը՝ պետական անվտանգության ապահովման երաշիվը, «Բանակ - հասարակություն» համարանակային գիրազործնական կոնֆերանս (զեկուցումներ, ելույթներ), Ս., «Պոլիցիաֆ», 2007, էջ 86-91, Առյախ, Ծովիի ազագորումն և ԼՂՀ գինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, «Ծովիի՝ հայոց քաղաքակրության օրբան», Ծովիի ազագորումն 15-րդ պարեղարձին Ավիրված գիրածովովի լոյուրեր, Ե., ՀՀ ԳԱՍՏ «Գիլտուրյուն» հրատ., 2007, էջ 205-217, Առյախ, Հայաստան-Արցախ. պարմության և արդիականության զուգահեռներում, հոդվածների ժողովածու, գիրը Ա. Ս., «Դիզակ պլյուս», 2009, Առյախ, Պաշտպանության բանակ, Հայարադյան ազագագրական պարերազմ. 1988-1994, Հանրագիրարան, էջ 549-554 ևա:

10-ի հրամանը: Հայ պատմագրության համար ընդունելի է այն տեսակետը, որ ՊԼ իրավաբանորեն կազմավորման ավարտը տեղի է ունեցել ՊՊԿ նախագահի 1994 թ. հունվարի 4-ի համապատասխան հրամանագրով:

Ինքնապաշտպանության նպատակով զինված ջոկատների կազմավորումը Արցախում պահանջված էր նախկին Ադրբեջանական ԽՍՀ մի շարք խոչոր քաղաքներում ու շրջաններում պետականորեն կազմակերպված հայ բնակչության ջարդերից ու տեղահանություններից, ինչպես նաև ԼՂԲԸ բնակավայրերի վրա ավազակային հարձակումներից և էքնիկական զոտումներից հետո հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող մարտահրավերները չեղոքացնելու անհրաժեշտությանը:

Արցախում զինված կազմավորումները, որոնց հիմքի վրա հետազյում ձևավորվել է կանոնավոր բանակ, ստեղծվել են հենց ադրբեջանական զինված կազմավորումների հարձակումներից հնքնապաշտպանվելու նպատակով: Նմանապես, կանոնավոր բանակ ստեղծելու կյանքի պահանջ էր՝ Ադրբեջանի՝ օտարազգի վարձկաններով ու նախկին խորհրդային ռազմական տեխնիկայով ուժեղացված կանոնավոր և զրակոչային բանակի լայնածավալ նախահարձակմանը դիմակայելու, մեր հանրապետության բոնազաված տարածքներն ազատագրելու նպատակով:

Շուշիի ռազմագործողությունը փաստորեն առանձին գործող ինքնապաշտպանական ջոկատներից ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի՝ նոր հաստիքակազմակերպական կառուցվածքի անցման և արագ զարգացման նախերգանքն էր<sup>8</sup>: Անկասկած, Շուշիի ազատագրումը կարևոր հանգրվան էր Արցախում կանոնավոր զինված ուժեր ստեղծելու և, ընդհանրապես, ռազմական շինարարության համար: Ոչ հեռու անցյալի վերահմաստավորման համատերսում բազմից անդրադաներ եղել են մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրման օրը, նաև ԼՂՀ պաշտպանության բանակի օր հոչակելու հանգամանքներին, պատմական ու իրավական հիմքերին: Սակայն կյանքը ցույց է տվել, որ անհրաժեշտ է վերստին արձարծել այդ ամենը, որպեսզի ճշմարտությունը հասնի գոնես այն հեղինակներին, որոնք իրենց հորինվածքները որպես «նոր տեսակետ» ներկայացնելու կամ ակնհայտ սխալները քողարկելու նպատակով դիտավորյալ ու միտումնավոր չեն անտեսում նախորդ ուսումնասիրությունների արդյունքները:

Ինչպես հայտնի է, Մայիսի 9-ը Հարբանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օր է սահմանվել ԼՂՀ նախագահի կողմից 1995 թ. դեկտեմբերի 25-ին ստորագրված «ԼՂՀ տոն և հիշատակի օրե-

<sup>8</sup> Հարությունյան Մ., Արցախում պարիքազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 126:

թի մասին» ԼՂՀ օրենքով<sup>9</sup>: Մայիսի 9-ը նաև Պաշտպանության բանակի օր հոչակելու փաստը բացատրվել է Շուշիի հաղթանակի կարևորության, ռազմագործողության գրագետ պլանավորման ու փայլուն կերպով անցկացման, ինչպես նաև առաջին անգամ մի քանի գրատեսակների ներգրավման ու նրանց համագործակցության ապահովման և այլ հանգամանքներով: Հիրավի, Շուշիի ազատագրման ռազմագործողության ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը և կամավորական ջոկատները լուրջ քննություն են բռնել և ապացուցել միասնական լինելու առավելությունը: Այս ամենով հանդերձ, ուսումնասիրողները դեռևս չեն գտել այնպիսի փաստեր, որոնք իրավաբանորեն կիմնավորեին մայիսի 9-ը ՊԲ ստեղծման օր համարելը: Ընդհակառակը, առայսօր վերհանված բոլոր փաստերը միահամուռ վկայում են, որ ՊԲ կազմավորման համար ելակետ պետք է ընդունել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թ. փետրվարի 24-ի որոշումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին:

Ժամանակին արխիվային նյութերի և իրադարձությունների տրամաբանական զարգացման ու պատճառահետևանքային կապի վրա հենվելով՝ պատմաբան Ա. Հարությունյանը հիմնավորել է այդ տեսակետը<sup>10</sup>: Մասնավիրապիս, նա հատկանշել է արխիվային նյութերից հայտնի այն փաստը, որ արդեն 1995 թ. դեկտեմբերի 5-ին ավարտվել էին «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոն և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքները, ինչի մասին ԼՂՀ խորհրդարանի\* քարտուղար տիկին Է. Գաբրիելյանին ծանուցել է ԼՂՀ խորհրդարանի կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական (ժամանակավոր)\* հանձնաժողովի նախագահ Ա. Սողոմոնյանը<sup>11</sup>: Օրենքի նախագծում Պաշտպանու-

<sup>9</sup> Տե՛ս «Կաձառ» գիրական կենտրոնի արխիվ, ԼՂՀ օրենքներ, Գործ հ. 4, էջ 23:

<sup>10</sup> Հարությունյան Ա., Շուշիի ազատագրման և ԼՂՀ զինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, Շուշիի հայոց բարձրակրության օրիս: Շուշիի ազատագրման 15-րդ տարիդարձին նվիրված զիրածողովի նյութեր, Եւ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրապ., 2007, էջ 205-217, տիկ նաև՝ Առյանի, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության գույքի նկատմամբ (հոդվածների ժողովածու), գիր Ա, 2009, էջ 152-159:

\* Այսպիսի է բնագրում:

<sup>11</sup> Արցախի Հանրապետության պետական արխիվ (ԱՀ ՊԱ), ֆ. 4, պ. մ. 16, կ. 2 (ԼՂՀ խորհրդարանի երկրորդ գումարման առաջին նախարարական 1995 թ. դեկտեմբերի 8-26-ի նիստերի սպագրությունները), էջ 15:

թյան բանակի օր էր նշված հունիսի 7-ը<sup>12</sup>: Հետագա ուսումնասիրությունների և ժամանակի գործիչների հետ հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ հունիսի 7-ն ընտրվել է 1991 թ. այդ նույն օրը Հաղորդի շրջանի Ծամճոր գյուղի ազատազրման կապակցությամբ, ինչը հանարվել է ինքնապաշտպանական ջոկատների ձեռք բերած առաջին հաջողությունը»<sup>13</sup>: Կարծում ենք, որ այս ընտրության համար պակաս կարևոր դեր չի խաղացել այն ժամանակ ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ Ա. Քարայանի ազդեցությունը: ԼՂՀ խորհրդարանը «ԼՂՀ տոն և հիշատակի օրերի մասին» օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ ըննարկել է 1995 թ. դեկտեմբերի 11-ին, ապա հետաձգել հաջորդ օրվան: Իսկ մինչ այդ նախագիծն ուղարկվել էր ԼՂՀ ՆԳ նախարարին, արդարադատության վարչության պետին, վարչապետին, պաշտպանության նախարարությանը, Նախագահին\*\*, և ստացվել են համապատասխան առաջարկություններ<sup>14</sup>: Դեկտեմբերի 12-ի ըննարկմանը ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ա. Սողոմոնյանը ներկայացրել է ստացված երեք առաջարկությունները. մայիսի 9-ը՝ Նախագահի աշխատակազմի կողմից, սեպտեմբերի 3-ը՝ Կառավարության կողմից, հունիսի 7-ը՝ Պաշտպանության բանակի կողմից: Հանձնաժողովի եզրակացությունը հետևյալն էր. քանի որ Պաշտպանության բանակն ինքն էր առաջարկում իր օրը, ուստի պետք է ընդունել հենց հունիսի 7-ը<sup>15</sup>: Սակայն, ԼՂՀ ԳԽ խոսնակ Կ. Քարությանի առաջարկությամբ, ՊԲ օրվա ընտրությունը հետաձգվել է՝ հաջորդ նիստում ըննարկելու համար, մինչև առաջարկություններ ներկայացրած կողմերի ընդհանուր հայտարարի գալը:

Արխիվային նյութերի բացը լրացրել են ժամանակի գործիչները: ԳԽ նախկին քարտուղար է. Գարրիելյանի և վերոհիշյալ ժամանակավոր հանձնաժողովի նախկին նախագահ Ա. Սողոմոնյանի հետ ճեպազրույցներից պարզ է դարձել, որ ԼՂՀ նախագահի աշխատակազմի առաջարկած օրն ընդունելու համար գիսավոր «փաստարկ» է համարվել տոն և հիշա-

<sup>12</sup> Նոյն գիեղում, էջ 16:

<sup>13</sup> Պազմարան Հրանտ Արքահամյանը սիազմամբ կարծում է, թե Տողակ է Արցահի լրաւածրում ազատազրկած առաջին բնակավայրը (լրեն Արքահամյան Հ., Կամավորական ջոկատներից մինչև Պաշտպանության բանակի սրելում, «Լրաբեր հասարակական գիրությունների», Եր., 2006, հ. 3, էջ 127):

<sup>14</sup> \*\* Բնագրում հաջորդականությունն այսպիսին է:

<sup>15</sup> Նոյն գիեղում, էջ 6:

<sup>16</sup> Նոյն գիեղում, էջ 11-12:

տակի օրերի քանակը հնարավորինս սահմանափակելու նպատակահարմարությունը<sup>16</sup>:

Մ. Հարությունյանի վկայությամբ, երբ վերհանվել ու գիտական շրջանառության մեջ է դրվել Պաշտպանության բանակի կազմավորման իրավական բոլորապահակը, այդ ժամանակ ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ս. Օհանյանը, ի պաշտպանություն մայիսի 9-ի, հղում է կատարել ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքին, որտեղ սահմանված է, որ զորանախ տարեկան տոնի համար կարող է ամսաթիվ ընտրվել զորանախ պատմության հիշարժան օրերից մեկը՝ կազմավորումը, շքանշանով պարզեցատրվելը, Հայրենիքի թշնամու դեմ մղված մարտում տարած նշանակալից հաղորդակը, մարտական հերթապահությունն առաջին անգամ ստանձնելը: Մինչդեռ, ինչպես հայտնի է, հիշյալ կանոնագիրը ՀՀ Ազգային ժողովի համապատասխան օրենքով հաստատվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ին<sup>17</sup>, այսինքն՝ Պաշտպանության բանակի օրը ԼՂՀ օրենքով սահմանելուց գրեթե մեկ տարի ուշ: Եթե անգամ Շուշիի ազատագրումը փորձենք դիտարկել «թշնամու դեմ նշանակալից հաղորդանակի» տեսանկյունից, միևնույն է, չենք կարող անտեսել «կազմավորման օրը», որը, ի դեմ, կանոնագրքով նախատեսված դեպքերից առաջինն է: Մեր խորին համոզմանք՝ ՊԲ կազմավորման ուղին իրավական հարթության վրա բավական տեսանելի ուրվագծվում է, թեև մի շարք առանձնահատկություններից ու օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ նրա գաղտնի զարգացումներն իրավաբանորեն ձևակերպվել են բավական ուշ:

Կարծում ենք՝ այլևս անառարկելի է, որ 1992 թ. փետրվարի 24-ը շրջադարձին է եղել ԼՂՀ ԻՊՈՒ կազմավորման համար<sup>18</sup>: Փաստորեն 1992 թ. փետրվարի 24-ին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը պետական կարգավիճակ են ստացել, ինչը թելադրված էր ինչպես նախընթաց զարգացումներով, այնպես էլ առաջիկա կարևոր ու ազմաքաղաքական խնդիրների

<sup>16</sup> Հարցագրույցները կայացել են 2007 թ. ամռանը:

<sup>17</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրը, Ե., ՀՀ ՊՆ հրապ., 1997, էջ 1, 252 հավելված 5:

<sup>18</sup> Տե՛ս Հարությունյան Մ, Արցախան պատերազմը և Պաշտպանության բանակի մարդական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. զիրուր. թեկնածուի զիրակ. աստիճանի հայցման արենախտություն, էջ 158-159, Առյան՝ Արցախան պատերազմը և պաշտպանության բանակի մարդական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի լուսապահի): Գիրք 5, Ը, «Կաճառ» զիրական կենտրոնի հրապ., 2015, էջ 56-57, Առյան՝ Պաշտպանության բանակ: Տե՛ս Հարաբաղյան ազարտագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիրարան, էջ 549-554:

լուծման անհրաժեշտությամբ: Մինչև 1992 թ. փետրվարի 24-ը Արցախի տարածքում տարերայնորեն ձևավորված աշխարհազորային կամավորական ջոկատները հաջողությամբ իրականացրել են սահմանների և հանրապետության ներսում գտնվող թշնամական հենակետերին մերժակա հայկական բնակավայրերի պաշտպանության ոչ դյուրին խնդիրը: Հենց այդ խնդիրի է բխել նաև աղբքանացիներով բնակեցված վտանգավոր կրակակետերի ու հենակետերի վնասազերծման անհրաժեշտությունը. աղբեցանցիները շրջափակել էին ճանապարհները, ավազակային հարձակումներ էին գործում խաղաղ բնակչության վրա և կողոպտում հանրային ու մասնավոր ունեցվածքը և, վերջապես, պարբերաբար գնդակոծում էին հայկական բնակավայրերը: 1991 թ. աշնանը Հաղորդի շրջանում իրականացված ռազմագործողությունների շարքը, որոնց ընթացքում ազատագրվել են «Կոլցո» գործողության ժամանակ բռնազաված բնակավայրերի մի մասը և Տողը, նոյն տարվա դեկտեմբերին Ասկերանի շրջանի Զամիլլուի, Լեսնոյեի, Մարտակերտի շրջանի Իմարաք-Քարավանդի (Քարահունջի), Ռոմուրլուի (Ծաղկաշենի) և Ստեփանակերտի արվարձան Կրկժանի համար մղված մարտերը, 1992 թ. ծմբային ռազմարշավի հաջողությունները Կրկժանում, Մալիքեկլուում, Ղարաբաղլուում (այժմ՝ Ղարանդա) և Վերին Վեյսալուում ցոյց են տվել Արցախի ինքնապաշտպանության ուժերի որակական աճն ու մարտունակության բարձրացումը, հրամանատարների ու ազատամարտիկների մարտավարական հմտությունների և փորձի բազմապատկումը: Փաստորեն հասունացել էր Արցախի ինքնապաշտպանության ուժերին իրավական կարգավիճակ շնորհելու պատմական պահը: Մյուս կողմից՝ Ստեփանակերտի օդանավակայանի ազատագրման ու Խոշարուի կրակակետերի ճնշման պատասխանառու և վճռորոշ ռազմագործողությունից առաջ պահանջված էր հայրենի իշխանությունների աջակցությունը հայ կամավորական-ազատամարտիկներին, ինչը կրաքարացներ նրանց մարտական ոգին, կրազմապատկեր հաջողությունը նվաճելու վճռականությունը:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թ. փետրվարի 24-ի Հ. ՆԽ-0019-1 որոշումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին կարելի է բնորոշել որպես նորաստեղծ հանրապետության սահմանները հաջողությամբ պաշտպանող աշխարհազորային-կամավորական ջոկատներին պետական ու իրավական աջակցություն, յուրօրինակ խրախուսում և, ամենակարևորը, համապատասխան կարգավիճակի շնորհում:

Այդ պատմական որոշումն ընդունելիս ԼՂՀ Գ.Խ նախագահությունը ելնում էր այն իրողությունից, որ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչու-

թյան նկատմամբ իրականացվող ցեղասպանության, կողոպուտի ու բռնության քաղաքականությունը և հայկական գյուղերի զանգվածային բռնատեղահանումը հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատների ստեղծմանը: ԼՂՀ բարձրագույն օրենսդիր մարմնի նախագահությունը նկատի էր առնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Աղրբեջանի Հանրապետության հարածուն զավթողական գործողությունները և, վերջապես, նպատակ է ունեցել հաշվառելու գորահավաքային միջոցները և ապահովելու հանրապետության պաշտպանությունը:

ԼՂՀ Գ-Խ նախագահությունը որոշել է զինված ջոկատները ճանաչել որպես ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր և դրանք Ենթարկել միասնական հրամանատարության: Նկատենք, որ առանձին-առանձին գործող ջոկատների համախմբումը մեկ հրամանատարության ներքո, նրանց ջանքերի համատեղումը իիրավի բարդ խնդիրներ էին, որոնց լուծման համար պահանջվեցին մի քանի այլ որոշումներ, հրամանագրեր և բանակաշխնության երկարատև գործընթաց:

ԼՂՀ Գ-Խ նախագահությունը շրջանների ու քաղաքների գործկոմներին և զինկոմիսարիատներին հանձնարարել է մեկամյա ժամկետում անցկացնել հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում և զորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում: Որոշման երկրորդ կետով ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերում ներգրավված զինապարտները համարվում էին զորակոչված: Այնուհետև զինկոմիսարիատներին հանձնարարվում էր ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շրջանային ստորաբաժանումների շտաբների հետ համատեղ կազմակերպել ԼՂՀ պաշտպանության համար գրիվածների, անհայտ կորած և հաշմված անձանց վերահաշվառում<sup>19</sup>:

Ակներևաբար, այս որոշմամբ իրավաբանորեն ձևակերպվել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի պետական կարգավիճակը, իսկ արդեն զինծառայության մեջ գտնվող զինապարտները ճանաչվել են ԼՂՀ զինված ուժեր գորակոչվածներ: ԼՂՀ-ի՝ խորհրդարանական հանրապետության գերագույն մարմնի նախագահության ընդունած որոշումն անկասկած օրենքի ուժ ուներ, հետևաբար ԼՂՀ զինված ուժերի կամ Պաշտպանության բանակի ստեղծումը պետք է համարել առնվազն փետրվարի 24-ը: Հավելենք, որ ԼՂՀ Գերագույն խորհուրդը Գ-Խ նախագահությանը լիազորել էր ընդունել օրենքներ և դրանց հավասարեցված որոշումներ (Ելնելով պատե-

<sup>19</sup> ԱՀ ՊԱ, ֆ. 1, ց. 5, սգ. մ. 13, կ. 1, թ. 24:

րազմական իրավիճակից): Նախկին պատգամավորները դա բացատրում են նրանով, որ հակառակորդի նախահարձակման պատճառով պատգամավորների մի մասը գենքը ձեռքին մարտնչում էր ԼՂՀ սահմաններին, ուստի հաճախ դժվար էր քվորում ապահովել, ուստի ԳԽ-ն լիազորել էր նախագահությանը լինել մշտապես գործող մարմին և որոշումներ կայացնել նաև ԳԽ-ի անունից:

1992 թ. փետրվարի 24-ը Արցախի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մեկնակետ ընդունելու օգտին է խոսում նաև Վլադիմիր Հարությունյանի այն վկայությունը, որ 1992 թ. փետրվարին (Խոջալուի ազատագրումից հետո) առաջին զինուոծիկն է տեղափոխել Ստեփանակերտ՝ Լեռնային Ղարաբաղի նոր-նոր ոտքի կանգնող կանոնավոր բանակի համար<sup>20</sup>:

Փետրվարի 24-ի որոշումից հետո Ինքնապաշտպանության ուժերը կամավորականության սկզբունքով համարելուն գուգահեռ սկսվեց նաև զինապարտների հավաքագրումը: Մանավանդ Շուշիի ազատագրումը նախապատրաստելու կապակցությամբ գարնանը զենքի կոչվեցին այն զինապարտները, որոնք մինչ այդ ընդգրկված չէին ինքնապաշտպանական ջոկատներում:

Մայիսի 9-ը ՊԲ օր հոչակելը կարելի էր հասկանալ, քանի որ այդ օրը ձեռք է բերվել փայլուն ռազմական հաղթանակ, բայց ահա դժվար էր համակերպվել այն մտքին, որ ՊԲ զինծառայողների ծառայության ստաժը հաշվարկվում էր 1992 թ. սեպտեմբերի 1-ից: Ոմանք նույնիսկ պնդում են, որ ՊԲ-ն իր ստեղծվել է սեպտեմբերի 1-ին<sup>21</sup>: Սակայն փաստն այն է, որ տակավին 1992 թ. օգոստոսի 14-ին ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի՝ «Պաշտպանական շրջաններ կազմակերպելու և ուժերի ու միջոցների շրջանային լրակազմի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» հրամանագրով ընդամենը ԻՊՈՒ կազմավորման հերթական փուլն է նշանավորվել: Մասնավորապես անցում է կատարվել ավելի խոշոր կանոնավոր ստորաբաժանումների (գումարտակների, դիվիզիոնների) վերակազմավորմանը (մինչ այդ մարտավարական միավորը վաշտն

<sup>20</sup> Արյունյան Բ., Փլագ հած չինարօյ. Ռասկազы, Ե., Авторское издание, 2006, с. 24:

<sup>21</sup> Արքահամյան-Հայրապետյան Շ., «Վյորվա մեր նվաճումը դեռ հաղթանակ չէ» (հարցագրուց ԼՂՀ պաշտպանության նախարար-ՊԲ հրամանադրար, գեներալ-լեյտենանու Ս. Բարայանի հետ), «Հայոց աշխարհ», հ. 38, 7 օգոստոսի 1997 թ., էջ 2, Արքահամյան Շ., Մարդկանող Արցախը, զիրք Գ (1985-2000), էջ 560:

էր), ինչպես նաև ստեղծվել են 6 պաշտպանական շրջաններ: Փաստորեն օգոստոսի 14-ի համապատասխան հրամանագրի կենսագործման երկար ու դժվարին ճանապարհին սեպտեմբերի 1-ը նյութ օրերից առանձնացել է սոսկ նրանով, որ ամսվա սկզբն էր, ուստի նոր հրամանները գրվեցին, ու զինոռնիկների հաշվարկումը սկսվեց հենց այդ օրից: Ուստի սեպտեմբերի 1-ը բանակի ստեղծման օր համարելը, ըստ Էության, իմբնավորված չէ<sup>22</sup>: Մինչդեռ 1992 թ. փետրվարի 24-ի որոշումը ԼՂՀ իմբնապաշտպանության ուժերի մասին հանդիսացել է բանակի ստեղծման իրավական իմքը և ռազմապաշտպանական ոլորտի հետ կապված հետագա բոլոր որոշումների մեկնակետը:

Պատմաբան Մ. Հարուրյանյանի սահմանած՝ ՊԲ-ի ստեղծման գրությանը 4 փուլերի<sup>23</sup> ներկայացումը, կարծում ենք, ավելի համոզիչ կդարձնի խնդրո առարկա տեսակետը:

Ազգբնական փուլում՝ 1988 թ. փետրվարի 22 - 1992 թ. փետրվարի 24-ի ընթացքում, ձևավորվել են մի շարք կամավորական-իմբնապաշտպանական ջոկատներ ու աշխարհազորային խմբեր, որոնք սկզբնավորվել են Աղդամից Ասկերան ավանի վրա աղբեժօնցիների հարձակումից ու սումգայիթյան եղեննագործությունից անմիջապես հետո և, ինչպես նշվել է, պաշտոնական կարգավիճակ են ստացել 1992 թ. փետրվարի 24-ին՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության համապատասխան որոշմամբ: Փաստորեն ԻՊՈՒ ստորաբաժանումների մեծամասնության կազմավորումը 1991 թ. ամռանը և աշնանը հիմնականում ավարտվել էր, իսկ արդեն 1992 թ. փետրվարի 24-ին օրինականացվել է ապագա կանոնավոր բանակի կորիգի ծևավորումը: Այդ ժամանակ իմբնապաշտպանական ջոկատների

<sup>22</sup> Տե՛ս «Հարուրյունյան Մ», Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարդարական ուղին. 1991-1994 թթ.: Պայմ. գիրուր. թեկնածուի գիրակ. աստիճանի հայցման արենախտություն, էջ 86-88, 129-130, Առյանի, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարդարական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի դարեկիրք): Գիր 5, Ը, էջ 109-113:

<sup>23</sup> «Հարուրյունյան Մ», Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարդարական ուղին. 1991-1994 թթ.: Պայմ. գիրուր. թեկնածուի գիրակ. աստիճանի հայցման արենախտություն, էջ 158-159, Առյանի, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարդարական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի դարեկիրք): Գիր 5, էջ 8, 199-200, «Հարուրյունյան Մ», Պաշտպանության բանակ: Տե՛ս «Հարաբաղյան ազարագրական պատերազմ. 1988-1994: Հանրազիւրական, էջ 549-554 և այլն:

խնդիրն էր աղքեցանցիների հարձակումներից պաշտպանել խաղաղ բնակավայրերը: Ըստ անհրաժեշտության տեղերում ստեղծված աշխարհազրային խմբերն առավել վտանգված իրավիճակներում օժանդակություն են ստացել քաղաքներում կազմավորված աշխարհազրային խմբերից ու ջոկատներից: Իսկ հատուկ պատրաստություն անցած կամ զինվորական փորձառություն ունեցող կամավորների մարտունակ ջոկատները գործել են իհմնականում Հյուսիսային Արցախում, Հաղորդի սահմանամերձ գոտում, Շուշիի շրջանի հայկական գյուղերում և այլուր<sup>24</sup>: Հատկանշելի է, որ ջոկատների ստեղծումն ու գործունեությունն իրականացվել են ընդհատակում, որովհետև դրանք ԽՍՀՄ իշխանությունների կողմից դիտվել են օրենքից դրւս, իսկ ՆԳՆ ներքին գորքերին (ՆԶ) իրավունք էր վերապահված ցրելու դրանք՝ առզրավելով առկա գենքն ու զինամթերքը: Արցախի ինքնապաշտպանության պատասխանատունների խնդիրները որոշակի փոփոխություններ են կրել ԼՂՀ տարածքից ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ ստորաբաժանումների դուրսերումից (1991 թ. դեկտեմբերի 26-ից) հետո: Արցախ գործողված Ա. Տեր-Թաղևոսյանի դեկավարությամբ նոր քափ է ստացել ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը: Հաղորդի և Սարտունիի շրջաններում դրանցում ընդգրկվել են մոտավորապես 400-ական, Ասկերանում, Մարտակերտում և Ստեփանակերտում՝ ավելի քան 500-ական մարտիկներ: 1991 թ. հոկտեմբեր - 1992 թ. փետրվար ժամանակահատվածում նվաճված մի շարք ռազմական հաղթանակներն ամրապնդել են ինքնապաշտպանական ջոկատների դիրքերը, նկատելիորեն համալրել նրանց սպառազինությունը, իրամանատարական կազմը մարտավարական փորձ է ձեռք բերել, բարձրացել է հայ ռազմիկների մարտական ոգին: Դրանք գործուներ էին, որոնք առավելագույնս նպաստել են ազատանարդիկների մեջ սեփական ուժերի նկատմամբ վստահության ու հաղթելու վճռականության ձևավորմանը, որոնց շնորհիվ հաջողվել է համեմատաբար կարճ ժամանակամիջոցում՝ մինչև 1992 թ. մայիսի 18-ը, ճնշել ԼՂՀ տարածքի թշնամական գրեթե բոլոր կրակակետերը<sup>25</sup>:

Մշտապես կատարելազործվել է նաև դեկավարման համակարգը՝ կադրային ու կառուցվածքային բարելավումների միջոցով: Դրա վկայությունն

<sup>24</sup> Ավելի հաճամանալից դես Հարությունյան ԱՌ, Արցախյան պարերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 27-29:

<sup>25</sup> Տես նաև Հարությունյան ԱՌ, Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը, «ԱրՊՀ զիրական դեղեկագիր», Ա, 2000, հ. 1, էջ 80-83:

Էր աֆղանական պատերազմի փորձառու հրամանատարներից\* գնդապետ Ա. Ի. Տեր-Թաղևոսյանի նշանակումը Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար<sup>26</sup>: Պետք է վրիպակ համարել նաև պատմաբան Հրանտ Աբրահամյանի հետևյալ տողը. «Դեռևս փետրվարի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում էր ընդունել ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատար նշանակել գնդապետ Ա. Տեր-Թաղևոսյանին»<sup>27</sup>, քանի որ Վերջինս այդ պաշտոնում նշանակվել է 1992 թ. մարտի 4-ին<sup>28</sup>: Կատարելագործելով պաշտպանության ոլորտի կողեզիալ ղեկավարման համակարգը՝ նոյն օրը հաստատվել է նաև ԼՂՀ պաշտպանության խորհրդի կազմը՝ ԼՂՀ ԳԽ խոսնակ Ա. Սկրտչյանի նախագահությամբ<sup>29</sup>. Ինչպես արդեն նշվել է, մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվել է Պաշտպանության կոմիտե, որն այնուհետև վերանվանվել է Ինքնապաշտպանության կոմիտեի, որի նախագահ է նշանակվել Ա. Սարգսյանը<sup>30</sup>: Նորաստեղծ մարմինը, առաջնորդվելով ԼՂՀ ԳԽ և ՆԽ որոշումներով ու կարգադրություններով, կազմակերպվել է ինքնապաշտպանական ջոկատների միավորման, բանակի նյութառեխնիկական բազայի ստեղծման գործը, ձևավորել ու ղեկավարել է ԻՊՈՒ վարչության աշխատանքները: Տեղին ենք համարում անդրադառնալ նաև Պաշտպանության կոմիտեն Ինքնապաշտպանության կոմիտեի փոխակերպելու հարցին: Դեռևս չի հաջողվել որևէ վավերագիր գտնել, որտեղ ամրագրված ու հիմնավորված կլիներ այդ փոխակերպումը ամենայն հավանականությամբ նման փաստաբություն չկա: Մեր կարծիքով, Պաշտպանության կոմիտեն Ինքնապաշտպանության կոմիտեի է վերանվանվել 1992 թ. օգոստոսի 15-ից հետո, որպեսզի այդ օրը ստեղծված Պաշտպանության պետական կոմիտեի անվան հետ շփոթմունքի տեղիք չտա:

\* Մեր հայրենակցի հրամանադրաբական ձիրքը և հնարամդությունը բազմից զգացած քշնամին նրան անվանել է «Լիռնային աղվես» (լրեն Կոզմինով Ա., Պисьмо с того света, «Солдат удачи», N 6, 1998, с. 18, примечание N 7):

<sup>26</sup> Տե՛ս ԱՀ ՊԱ, ֆ. 1, գ. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 26:

<sup>27</sup> Աբրահամյան Հ., Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի սկզբնումը, «Լրաբեր հասարակական զիրությունների», Ե., 2006, հ. 3, էջ 128:

<sup>28</sup> ԱՀ ՊԱ, ֆ. 1, գ. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 26:

<sup>29</sup> Տե՛ս ԱՀ ՊԱ, ֆ. 1, գ. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 29:

<sup>30</sup> Տե՛ս ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ ՆԽ 1992 թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, հ. 3, թ. 2:

ՊԲ կազմավորման երկրորդ փուլի (1992 թ. փետրվարի 24 - օգոստոսի 14) հիմնական առանձնահատկությունն այն էր, որ ավարտին է հասցել ԼՂՀ ներսում ազատազրական մարտերի շարքը, պատերազմը «նահանջել» է հանրապետության սահմաններից անդին, այսպես կոչված Աղբեցանի և ԼՂՀ-ի միջև հակամարտությունը թևակոխել է որակական նոր փուլ։ Ամենանշանակալի իրադարձությունը Շուշիի ազատազրումն էր մայիսի 9-ին, որն առայսօր նշվում է նաև որպես Պաշտպանության բանակի օր։

ԼՂՀ նախագահի՝ «Պաշտպանական շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կառուցվածքի մասին» հրամանով 1992 թ. օգոստոսի 14-ին մեկնարկել են 6 պաշտպանական շրջանների ստեղծման աշխատանքները<sup>31</sup>։ Միաժամանակ, առկա նյութական ու ռազմական հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու, իշխանության բոլոր լծակները մեկտեղելու և ռազմաճակատում արմատական բեկում մտցնելու նպատակով 1992 թ. օգոստոսի 15-ին ստեղծվել է ԼՂՀ ՊՊԿ Ռ. Քոչարյանի նախագահությամբ։

ՊԲ կազմավորման երրորդ փուլում (1992 թ. օգոստոսի 14 - 1993 թ. նոյեմբերի 10) նկատելի հաջողություններ են ձեռք բերվել ինչպես բանակաշինության, այնպես էլ հակառակորդի կրակակետերի ու ռազմական հենադաշտերի վնասագերծման ասպարեզներում։ Այս ամենը հիմք է ծառայել 1993 թ. նոյեմբերի 10-ին ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանի հրամանով ԻՊՈՒ-ի՝ ԼՂՀ ՊԲ-ի վերակազմավորումն աճրագրելու համար<sup>32</sup>։ ԼՂՀ ԻՊՈՒ-ն ՊԲ-ի վերակազմավորելու մասին 1993 թ. նոյեմբերի 10-ի ՊՊԿ նախագահի հրամանագիրը, որը Մ. Հարությունյանի կողմից է շրջանառության մեջ դրվել, մեջբերել են նաև Ս. Օհանյանը<sup>33</sup>, Ս. Հարաբյանը<sup>34</sup>, Տ. Հակոբյանը<sup>35</sup> և որիշ հեղինակներ։

ՊԲ հրամանատար է նշանակվել երիտասարդ գնդապետ Ս. Բաբայանը, առաջին տեղակալ՝ փորձառու զինվորական մասնագետ, հրետանու գեներալ-մայոր Ջ. Խվանյանը։

<sup>31</sup> Տե՛ս ԱՀ ՊՆԱ, ԼՂՀ ԻՊԿ նախագահի հրամանագրեր. գործ հ. 1, հրաման հ. 2, թ. 3-4:

<sup>32</sup> Տե՛ս ԱՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումները. Արձ. հ. 33, որոշում հ. 323:

<sup>33</sup> Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Ե., «Տիգրան Մեծ», 2007, էջ 23:

<sup>34</sup> Հարաբյան Ս., Լեռնային Պարագաղի Հանրապետության պաշտպանության բանակը, Ե., 2012, էջ 47:

<sup>35</sup> Հակոբյան Տ., ԼՂՀ հոչակումը և պիտիական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Ե., «Էղիք պրիմար», 2011, էջ 130:

ՊԲ կազմավորման չորրորդ փուլը մի յուրօրինակ փորձաշրջան էր թե՝ հրամանատարության և թե՝ զինանձնակազմի համար: Օմարի լեռնանցքից մինչև Արաքս գետը ձգվող ռազմաճակատի ողջ երկայնքով Աղրբեջանի լայնածավալ հարձակումներին համարժեք հակահարված տալը, հաստիքակառուցվածքային ու կադրային բարելավումները հիմք են դարձել 1994 թ. հունվարի 4-ին ՊԲ կառուցվածքը ԼՂՀ ՊՊԿ նախագահի կողմից հաստատելու համար, ինչը փաստորեն նշանափորել է ՊԲ կազմավորման ավարտը<sup>36</sup>:

Հիրավի, ՊԲ ստեղծումը կարևոր նշանակություն է ունեցել հակառակորդի նախահարձակման կասեցման և պետական շինարարության ապարեգում նվաճումներն ամրապնդելու համար:

Այսայսով, ինչպես հստակ երևում է վերոգրյալից, Պաշտպանության բանակը անցել է կազմավորման համեմատաբար կարճատև, բայց հազեցած ու բովանդակալից ուղի, որն արձանագրված է նաև համապատասխան որոշումներով ու հրամանագրերով: Մեր կարծիքով, իրավաբանորեն ՊԲ-ի կազմավորման օրը 1992 թ. փետրվարի 24-ն է, եթե մինչ այդ տարեթայնորեն կազմավորված ինքնապաշտպանական-կամավորական զուկատները պետական կազմավիճակ են ստացել: Այրուհանդերձ, չառալիւլվ Մայիսի 9-ը նաև որպես ՊԲ օր նշելու ավանդույթի շարունակմանը, ժամանակին Ս. Հարությունյանն առաջարկել է զինծառայողների ծառայության ստաժը հաշվարկել գոտե 1992 թ. փետրվարի 24-ից, բայց ոչ եթեք նույն թվականի սեպտեմբերի 1-ից, ինչպես անարդարացիորեն արվում էր մինչև 2007 թվականը:

1992 թ. փետրվարի 24-ին հաջորդած գրեթե 2 տարիների ընթացքում Պաշտպանության բանակն անցել է կազմավորման հերթական փուլերը և արդեն 1994 թ. հունվարի 4-ին հասել եղագացին, ինչը փաստվել է ՊՊԿ նախագահի վերոհիշյալ հրամանագրով: Անշուշտ, բանակաշինությունն անընդհատ գործընթաց է, և երբեւ այն կանգ չի առնում, ուստի խոսքը իրավականորեն կազմավորվելու ավարտի մասին է:

Ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ ՊԲ կազմավորման հարցը պատճագրության մեջ լայն քննարկման առարկա չի եղել: Սույն հրապարակմանը վորձել ենք ինդրու առարկա թեմայով ուսումնակրությունների հեղինակների ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ 1992 թ. սեպտեմբերի 1-ը Պաշտպանության բանակի օր համարելը իրավական ու պատմա-

<sup>36</sup> Տե՛ս ԱՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումները. Արձ. հ. 36, որոշում հ. 357:

կան հիմքեր չունի, հետևաբար այդ վրիպակը գրքից գիրք մեխանիկորեն փոխադրելը հակասում է պատմագրության գիտականության սկզբունքին:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(ՊԲ ՀԱՍՏԵՔԱՎԱՉՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ 20-ԱՎՅԱԿԻ ԱՌԹԻՎ)**

**Մ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, «Կաճառ» գիլական կենդրութիւնի ղեկավար,  
Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Կաճառ» գիլական կենդրութիւնի  
ավագ գիլաշխափող, Հ. Ա. ԱՎԱՆԵՍՈՎ, ՄՄՀ Կովկասագիտության  
կենդրութիւնի աշխատակից**

**ԱՄՓՈՓԱՎԳԻՐ**

Արցախի պաշտպանության բանակի՝ որպես կանոնավոր զինված ուժերի կազմավորման հարցի ուսումնասիրությունը հրատապ է Արքեջանի ազրեախայի հետևանքով հարկադրված զինված ինքնապաշտպանության դիմելու՝ Արցախի հայ ազգաբնակչության՝ միջազգային իրավունքով անրագրված գործողությունների արդարացիության փաստը հանրահոչակելու տեսակետից:

Թեմային վերսախի անդրադառնալը պահանջված է նաև այն հանգամանքով, որ որոշ հեղինակներ, անտեսելով գիտության արդի նվաճումները, այդ թվում նաև ՊԲ կազմավորման հիմնահարցերի գիտական ուսումնասիրությունների արդյունքները, շարունակում են նախկին սխալները կրկնել և անհարկի շրջանառել, որոնք ակնհայտորեն խոչընդոտում են ճշմարտության որոնումների առաջընթացը ու վնասում տեղեկությային պատերազմում հայկական դիրքերի ամրապնմանը, Արքեջանի ազրեսիվ քաղաքականության պատճառով առաջացած հակամարտության վերաբերյալ օրյեկտիվ հասարակական կարծիքի ձևավորմանը:

Այս համապատեկի վրա հոդվածում քննության են առնվել ՊԲ կազմավորման մի քանի հիմնահարցերը և դրանց լուսաբանման ուղղությամբ հայ պատմագրության նվաճումները:

ВОПРОС ФОРМИРОВАНИЯ АРМИИ ОБОРОНЫ  
В ИСТОРИОГРАФИИ  
(К 20-ЛЕТИЮ УТВЕРЖДЕНИЯ НОВОЙ  
ШТАТНО-ОРГАНИЗАЦИОННОЙ СТРУКТУРЫ АО)

*М. А. АРУТЮНЯН, кандидат исторических наук, доцент,  
руководитель научного центра «Качар», А. А. АРУТЮНЯН, старший  
сотрудник научного центра «Качар», О. С. АВАНЕСОВ, сотрудник  
Центра кавказоведения университета «Месроп Мащтоц»*

РЕЗЮМЕ

Изучение вопроса формирования Армии Обороны Арцаха как регулярных вооруженных сил является актуальным с точки зрения обнародования факта справедливости действий армянского населения Арцаха, закрепленных в международном праве, по применению вооруженной самообороны в результате агрессии Азербайджана.

Поводом для возвращения к этой теме является тот факт, что некоторые авторы, игнорируя современные научные достижения, в том числе результаты научных исследований проблем формирования Армии обороны, продолжают повторять прежние ошибки и бессмысленно их распространять, что явно препятствует поискам истины, мешает укреплению позиций Армении в информационной войне и формированию объективного общественного мнения о конфликте, вызванном агрессивной политикой Азербайджана.

В данной статье мы рассмотрели несколько вопросов формирования Армии обороны и достижения армянской историографии по их освещению.

THE PROBLEM OF THE FORMATION OF DEFENCE  
ARMY IN THE HISTORIOGRAPHY  
(ON THE 20<sup>th</sup> ANNIVERSARY OF ESTABLISHMENT OF DEFENCE  
ARMY STAFF NEW STRUCTURE)

*M. A. HARUTYUNYAN, Candidate of Historical Sciences, Associate Professor, Head of «Kachar» Scientific Center,*

*A. A. HARUTYUNYAN, Senior Researcher at «Kachar» Scientific Center,*

*H. S. AVANESOV, Employee of Center of Caucasus Studies*

*of the «Mesrop Mashtots» University*

SUMMARY

The study of the issue of formation of the Artsakh Defense Army as a regular armed force is urgent in terms of declaring the truthfulness of the actions enshrined in international law of the Armenian population of Artsakh for applying armed self-defense as a result of Azerbaijan's aggression.

Reacting to the subject again is also required by the fact that some authors, ignoring the current scientific achievements, including the results of the scientific studies of the problems of the formation of the Defense Army, continue to repeat past mistakes and unduly circulate them which obviously hamper progress and search of truth seekers, disturb strengthening the Armenian positions in the information war and the formation of an objective public opinion on the conflict caused by the aggressive policy of Azerbaijan. In this article we examined several issues of the formation of the Defense Army and the achievements of illustrating Armenian historiography on their coverage.